Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Armenian Territorial Development Fund

N Հ/01/1735-22 «12» 10 2022թ.

«Ինֆինիտի Գրուպ-1» ՍՊԸ տնօրեն
պարոն Ա. Երիջանյանին

Հարգելի պարոն Երիջանյան

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) և «Ինֆինիտի Գրուպ-1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Մատակարար) միջև 13.06.2022թ. կնքվել է թիվ ՋՏՄ-ՊԾԷԱՃ-ԱՊՁԲ-2022/1 ապրանքների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Համաձայն Պայմանագրի Մատակարարը պարտավորվել է Հիմնադրամին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանք՝ 500 կիլոգրամ A4 ֆորմատի թուղթ և 10 հատ գրասենյակային հաշվասարք, իսկ Հիմնադրամը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի կնքումից հետո դուք՝ որպես Մատակարար, չեք կատարել Ձեր պայմանագրային պարտավորությունները, ինչի կապակցությամբ Հիմնադրամը պարբերաբար ձեռնարկել է միջոցներ Ձեզ հետ կապ հաստատելու և ստեղծված իրավիճակը պարզելու համար, մասնավորապես՝ բազմիցս զանգահարել է Պայմանագրում նշված հեռախոսահամարին, որը չի պատասխանել և ընդամենը մեկ անգամ՝ օգոստոսի 29-ին ժամը 10:14-ին է հաջողվել զրուցել Ձեզ հետ: Հեռախոսազրույցի ժամանակ, դուք խոստացել եք, որ 3 օրվա ընթացքում կկարգավորեք հարցը և կկատարեք Պայմանագրով ստանձնած Ձեր պարտավորությունները, որը սակայն չեք կատարել և հետագա զանգերին շարունակել եք չպատասխանել: Հետագայում Հիմնադրամի պատասխանատու աշխատակիցը այցելություն է կատարվել Պայմանագրում նշված Մատակարարի հասցե, որտեղ նման ընկերություն չի հայտնաբերվել:

Բացի հեռախոսակապի միջոցով կապ հաստատելու փորձերից և այցելությունից Ձեզ ուղարկվել է երկու նամակ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու հիշեցման մասին, մասնավորապես՝ 23.08.2022թ. էլեկտրոնային նամակ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին՝ պատասխանատու աշխատակցի կողմից և 05.09.2022թ. N 738 պաշտոնական նամակ՝ Հիմնադրամի ՋՏ ԾԻՄ տնօրենի կողմից՝ Պայմանագրում նշված հասցեին, որոնք ևս մնացել են անպատասխան:

Հայաստանի Հանրապետություն, 375037, Երևան, Կ. Ուլնեցու 31
Հեռ. (37410) 247 123
K. Ulnetsu st. 31, Yerevan, 375037, Republic of Armenia
Tel. (37410) 247 123

Պայմանագրի 2.1.3 կետի (ա) ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի Հավելված N1-ով սահմանված պահանջներին, իսկ Պայմանագրի Հավելված N1-ով մասնավորապես նախատեսվում է, որ Մատակարարը պետք է մատակարարի՝

1/ 500 կիլոգրամ A4 ֆորմատի թուղթ - թերթերի ֆորմատը A4, թղթի կարգը A+, թղթի անթափանցելությունը՝ 94%, թղթի հաստությունը՝ 110 մկմ, թղթի պայծառությունը՝ 104%, քանակը տուփում 500 թերթ, 2,5 կգ, տուփերի քանակը արկղում՝ 5 հատ, սպիտակությունը՝ 152 % և ավելի, չկավճած թուղթ նախատեսված գրասենյակային տպիչներով տպագրման համար, թղթի խտությունը՝80գ/քմ:

2/ 10 հատ գրասենյակային հաշվասարք - գրասենյակային հաշվասարք տիպի կամ համարժեքը, կրկնակի հիշողությամբ, արևային էներգիայով լիցքավորվող, 32 հատ սեղմակոճակ և էկրանին 12 նիշ տեղավորվող, արտաքին չափսերը՝ 155*200մմ:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք Ձեզ, որ կայացվել է որոշում՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Ինֆինիտի Գրուպ-1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 13.06.2022թ. կնքված թիվ ՋՏՄ-ՊԾԷԱՃ-ԱՊՁԲ-2022/1 ապրանքների մատակարարման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

Recoverable Signature

Հարգանքով՝
Գործադիր տնօրեն

X

ԱՐԹՈՒՐ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Signed by: SOGHOMONYAN ARTUR 1205720065

Ա. Սողոմոնյան

Կատարողներ՝
Ա. Խաչատրյան, հեռ. 010 52 25 50
Գ. Քարիմյան, հեռ. 095 50 09 67